



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎԱՂ ԳԱՐՆԱՆ ՑԵԼԵՐԻ ՄԱՍԻՆ



ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԻՆՏԻՏՄԿԱ
ԲՕՏՏՈՒՈՒՆՔԵՆԻ
Владимир Маяк
СССР

ԽԱՅՄ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՇՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԿՈՍՏԱՎ

1931

631.5

2-53

15
53

51-2
1118
685

Ա. ՋԵՆԵՅԱԿ

04 AUG 2010

ՎԱՂ ԳԱՐՆԱՆ ՑԵԼԵՐԻ
ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЭТНОЛОГИИ
И этнографии
Историко-этнографический музей
СССР



00-62882

ՆՅՄ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
1044Ա 1991

13 APR 2013

16777

Քարգմ. Ագրոնոմ
Ար. Ավեսիխան



59853-66

Главлит № А-85.350 Заказ № 102 Тираж 6.000

Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва, Шлюзовая набережная, 10.

I

ՑԵԼԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ բան է ցելը: Ցել է կոչվում այն դաշտը, վորն ամառվա ընթացքում մի քանի անգամ մշակում ենք աշնանը տարեկան հացարույսեր ցանելու համար: Այլ դեպքերում այդ ցելերում ցանում են վոչ թե տարեկան, այլ դարնանի հացարույսեր: Այս դեպքում դարնանին ցանվում է մի տարուց հետո, հետևյալ դարնանը:

Ինչո՞ւ յե հարկավոր ցելը: Դաշտը ցելում ենք նրա համար, վորպեսզի ցանած հացարույսերից ստանանք լավ բերք:

Մեր ցանած հացարույսերը պատկանում են կենդանի բնությանը: Այն բոլորը, ինչ վոր մենք ցանում ենք, կենդանի եյակներ են: Դաշտերում ցանած բոլոր բույսերը ապրում են, աճում և բազմանում:

Ինչպես ամեն կենդանի եյակ, հացարույսերը իրենց գոյության համար պահանջում են վորոշ պայմաններ: Առանց այդ պայմանների բույսերը ապրել չեն կարող: Նրանց աճումը խանգարվում է և նրանք մեռնում են:

Ի՞նչ են պահանջում մեր հացարույսերը իրենց գոյությունը պահպանելու համար:

Նրանք պահանջում են լույս, ջերմություն, ող, սնունդ և հիվանդություններից ու ֆնասատուններից պաշտպանություն:

Լույսը և ջերմությունը բույսերը ստանում են արևից: Վո՛չ աղելացնել և վոչ ել պակասեցնել լույսն և ջերմությունը մարդը չի կարող: — Այդտեղ նա դեռ ևս անզոր է: Փոփոխել այն կլիման, վորի մեջ ապրում և աշխատում է մարդը, հնարավոր չէ: Հացարույսեր մշակող հողագործը միայն հարմարվում է կլիմային: Պետք է ասել, վոր ընդհանրապես, ջերմության և լույսի քանակը

ընթացում և բազմապատկում և գաղտնի մեր մշակած հացաբույսերի հաջող
ածաման և բազմացման համար: Բույսերին լույս և ջերմություն
տալու կարիք չի զգացվում: Ողբ ևս չատ է: Բույսը չընթացում
է ողով: Ողում են գտնվում տերևները: Արմատները նույնպես
չընթացում են ողով: Բայց հողի մեջ վոչ ամեն դեպքում օդը
բավական է լինում: Պնդացած հողը ներս չի թողնում արտաքին
ողբ, կամ թողնում է շատ քիչ: Հողում գտնվող ողի պակասու-
թյունից բույսը սուժում է, վատ է աճում և բերքն էլ պակաս-
եցնում է:

Հողի կնձիկավոր դրուժյունը նպաստում է ողի մուտքին հողի
մեջ: Ընդհակառակը, հողի փոշիացած դրուժյունը դժվարեցնում
է ողի մուտքը դեպի արմատները:

Անձրևից հետո փոշիացած հողերի յերեսին գոյանում է կեղև.
նա կտրում է ողի մուտքը հողի մեջ և դրանով դժվարացնում է
հողադործի դործը: Գրա համար էլ հողադործը ստիպված է հողը
պահպանել միշտ փխրուն-փափուկ:

Ցեղերի շտակ մշակումը ոգնում է հողը միշտ փափուկ դրու-
թյան մեջ պահպանելու: Այդ պատճառով էլ ցեղը բարենպաստում
է բույսի աճմանը: Ցեղերում ցանած հացաբույսը հաջող կերպով
աճում է և տալիս է լավ բերք:

Մեր Միության հարթավայրերում ջուրը ամենադժվար
պայմանն է բերք ստանալու համար: Այստեղ բերքը պայմանա-
վորված է ջրով: Ցեթե հողում խոնավություն կամ ջուր կա,
կլինի և բերք: Չկան դրանք — չի լինիլ և բերք: Քիչ են դրանք —
բերքն էլ պակաս կլինի:

Հողում գտնվող ջրի քանակությունը կախված է կլիմայից:
Հողը ջուր է ստանում անձրևից և ձյունից: Ամրան ընթացքում
անձրև է թափվում: Հողը կլանում է անձրևաջուրը և պահպանում
էր մեջ: Բույսերը այդ ջուրը առնելով հողից նորից շոգիացնում
են ողում: Ամեն բույս չորացնում է հողը:

Ձմրանը դաշտերը ծածկվում են ձյունով: Գարնանը այդ
ձյունը հալչում է և հողը կլանում, ծծում է այդ ձնահալը: Հողը
չծծած ջրերը հոսում են դեպի ձորակները և գետերը:

Մարդը չի տիրապետում կլիմային: Այդ պատճառով էլ
նա չի կարող ավելացնել ձյունը կամ անձրևները, բաշխել ըստ ժա-
մանակի, ինչպես վոր հարկավոր է բույսերի մշակության հա-

մար: Մարիլող անձրևների և ձյունի քանակը կամ, ինչպես ասում
են, տեղումների քանակը վորոշում է կլիման: Բայց մարդը կա-
ռոդ է ջուրը պահել և հետո այդ պահեստի ջուրը տալ բույսերին:

Մարդը կարող է անմիջականորեն բույսերին ջուր տալ ջրելու
միջոցով: Բայց վոռոգումը պահանջում է մեծ ծախսեր և ամեն
դեպքում բերքի ավելացումը չի ծածկում կատարած ծախսերը:
Բացի այդ, ամեն տեղ հնարավոր չէ վոռոգում կատարել: Այն տե-
ղերում, վորտեղ վոռոգումը ոգուտ կտա, հարկավոր է կատարել
արհեստական վոռոգում: Մեր ստեպների անծայր լայնությունն
այժմ անհնար է արհեստական վոռոգման յենթարկել, բայց և
այնպես մարդ ուժ ունի ջուրը ամբարելու և այդ պահեստի ջուրը
մատակարարելու մշակվող բույսերին:

Հողը հատկություն ունի ծծելու ջուրը և նրան իր մեջ պահե-
լու: Ահա հողի այդ հատկությունը ոգտադործեց մարդը:

Հողը շտակ ցելելու միջոցով հողադործը կարող է հավաքել
ձմրան և ամրան խոնավությունը, հնարավորություն տալով բույ-
սերին անմիջականորեն ոգտադործելու այդ: Ահա ինչու ցեղը
ծակցում է հացաբույսերի բերքի բարձրացմանը:

Բույսը կերակրվում է բոլոր կենդանի եյակների նման: Առանց
անունդի բույսը ապրել չի կարող: Սնունդը բույսը ստանում է ողից
և հողից: Ինչքան շատ է սնունդը, այնքան էլ բույսը ավելի լավ է
աճում և բազմանում, այսինքն տալիս է շատ բերք:

Ողում յեղած սննդի շափը բույսի համար սահմանափակված
չէ: Մարդուն հարկավոր չէ հող տանել այդ մասին: Հողում —
գործն ուրիշ է: Այստեղ սնունդը պակասում է և հողադործին
հարկավոր է սննդի հոգսը քաշել:

Բույսերը կերակրվում են հանքային նյութերով, այն էլ վոչ
թե մեկ, այլ շատ հանքանյութերով:

Ցեթե հողում պակասում է հարկավոր հանքանյութերից
վորեն մեկը, բույսը ապրել չի կարող, չնայած վոր մյուս նյու-
թերը կարող են լինել չափազանց շատ:

Գլխավոր հանքային նյութերը, վորոնք հաճախ պակասում են
հողում, հետևյալներն են — Ազոտ (բորակածին), Փոսֆոր և կալի:
Մյուս սննդանյութերը՝ ինչպես ծծումբը, կալցիյը, մագնիզիյը,
յերկաթը, սովորաբար հողում գտնվում են առատությամբ:

Յեթե բույսին տանք ամեն ինչ. — լույս, ջերմութիւն, ջուր, սնունդ, բայց սննդի մեջ չլինի սննդանյութերից մեկը, ասենք Փոսֆորը, մեր մշակելիք բույսը չի աճի և բերք ել չի տա: Յեթե հողում Փոսֆորը պակասի, բույսը վատ կաճի և բերքն ել կստացվի պակաս: Այս պատճառով ել հողագործը պիտի հոգա բույսին տալու անհրաժեշտ սննդանյութերը և այն ել առատութեամբ:

Լավ բերքը պայմանավորված է հողում բույսի համար գրտնվող բոլոր անհրաժեշտ սննդանյութերի քանակութեամբ: Կրօցակայի սննդանյութերից մեկը, բերքը կիջնի: Այլ կերպ ասած, բերքի քանակը վորոշում է այն սննդանյութը, վորն հողում գտնվում է ամենաքիչ չափով:

Յելը նպաստում է բոլոր սննդանյութերի հողում կուտակելու: Յեթե մեր հողերը հյութաքամված են, մենք նրանց պարտապանում ենք: Պարարտացնում ենք սովորաբար գոմաղբով (փեյին), վորն կրում է լրիվ պարարտանյութ անունը, վորովհետեւ նրա մեջ գտնվում են բույսին անհրաժեշտ բոլոր սննդատու նյութերը, նրանց թվում՝ Փոսֆորը, ազոտը (բորակածին) և կալիքը:

Հաճախ հողում պակասում են սննդանյութերից մեկը կամ յերկուսը՝ ասենք, պակասում է Փոսֆորը, կամ Փոսֆորը և ազոտը: Այս դեպքում բավական է հողի մեջ մուծել պակասող սննդանյութը՝ Փոսֆորը կամ ազոտը, կամ յերկուսն ել միասին, և բերքը լրիվ չափով կբարձրանա:

Փոսֆորը, ազոտը և կալին մուծում են հողի մեջ փոշածե դրութեամբ: Նման պարարտացումը կոչվում է միակողմանի կամ վոչ լրիվ պարարտացում: Մուծած պարարտանյութը նպաստում է սովորաբար յերկու բերքի, յերբեմն և ավելի:

Յելը հարմար դաշտ է ներկայացնում լրիվ կամ միակողմանի պարարտանյութ մուծելու համար: Լավ է ցելը պարարտացնել գոմաղբով կամ հանքային նյութերով:

Ջրի և սննդի մասին հողալուց դատ, հողագործը պետք է մտածի մշակվող բույսերը փաստատուններից պաշտպանելու մասին:

Ինչպես ամեն կենդանի եյակ, դաշտային բույսերը ունեն բազմաթիվ փաստատուներ: Բույսերին փաստում են կենդանիները, մկները և ուրիշ կոծանները: Վնասում են նաև սնկային հիվանդութիւնները (մուրը, թնջուկը և այլն):

Բազմաթիվ փաստ են հասցնում մորեխը, դանազան բզեզներ և վորդեր:

Բայց առանձնապես փաստում են մոլախոտերը (աղբախոտազիտախոտ — ալա): Կարելի յե ամենալավ պայմաններ ստեղծել բույսի լավ աճման համար, բայց հենց վոր յերեւան են դալիս մոլախոտերը, խեղդում են կուլտուրական բույսը: Մտացվում է կամ վատ բերք, կամ բոլորովին չի ստացվում:

Մոլախոտերը ահագին փնսաներ են հասցնում դյուղատնտեսութեանը: Նրանք, ինչպես և բոլոր բույսերը, սնվում են: Մնվելով հողում գտնվող սննդանյութերով, նրանք խլում են մեր մշակելիք բույսերի սնունդը: Մոլախոտերը աճելով, ծածկում են կուլտուրական բույսերը, խլում են նրանց լույսը, խեղդում են նրանց:

Մոլախոտերը կլանում են ջուրը, չորացնում են հողը: Միաժամանակ մոլախոտերը պատսպարում են դաշտային բույսերի փնսատուներին: Մոլախոտերի վրա սնվում և բազմանում են բազմաթիվ փնսասակար միջատներ: Մի խոսքով, մոլախոտից չար թըշնամի հողագործը չունի: Դրա համար ել հողագործը պիտի լարե բոլոր ուժերը մոլախոտերի դեմ կռվելու համար:

Յելը իրական միջոց է մոլախոտերի դեմ կռվելու համար: Յելը վոչնչացնում է մոլախոտերը: Յելից կարելի յե վերացնել ամեն մի մոլախոտ: Հարկավոր է միայն իմանալ ինչպես շիտակ կերպով մշակել ցելը: Լավ չմշակած ցելը, շիտակ չցելած հողը շատ չի ոգնի, առանձին սգուտ չի տա:

Շիտակ մշակած ցելը շատ ոգուտներ է տալիս հողագործին: Նա —

1. լավացնում է հողը,
2. հավաքում և պահպանում է խոնավութիւնը,
3. կուտակում է սննդանյութեր հողի մեջ.
4. վոչնչացնում է փնսատուներին,
5. նպաստում է բույսի ուժեղ աճմանը և բարձր բերք ստանալուն:

Ի՞նչպիսի ցելեր են լինում: Զանազանում են իրարից մի քանի տեսակի ցելեր:

Սև ցել, վորի մշակելը սկսում են դեռ աշնանից, տվյալ դաշտի բերքահավաքից հետո:

Վաղացել կամ մաքուր ցել, վորի մշակելը սկսում են վաղ գարնանից և օրհայտնում ամբողջ ամառվա ընթացքում մոլախոտերից ազատ, մաքուր դրուժյան մեջ:

Կանաչ պարարտանյութով ցելի տարբերութունը մյուս կերպի ցելերից այն է, վոր այսպիսի ցելը վարում են աշնանից, իսկ վաղ գարնան ցանում, գլխավորապես՝ լյուպին, սիսեռ և այլ բույսեր այն պայմանով, վոր ծաղկելու սկզբին հերկվի այդ կանաչապատ դաշտը: Այստեղ կանաչը ծառայում է հողին վորպես պարարտանյութ:

Զբաղեցրած ցել: Վարում են աշնանից: Գարնանից դբաղեցնում են — ցանում են վաղահաս բույսերով: Դաշտը ազատվում է դբաղեցրած բույսից մինչև հացաբույսերի աշնանացանը:

Մեծերիկական, խերսոնի կամ կուլխային ցելը կատարվում է ձյունը արտերի վրա պահելու համար:

Բացի այդ՝ տարբերում են առանց պարարտացման և պարարտացումով ցելերը: Վերև հիշատակված ցելերի բոլոր տեսակներից ամենավատը ուշացրած ցելն է: Նա քիչ է ոգնում հողագործին: Վարը կատարվում է ամբան սկզբին: Մինչ այդ դաշտը ծածկվում է մոլախոտերով: Մոլախոտերը չորացնում են հողը, կլանում են օննդանյութերը, պատասպարում են շատ ֆլասատուների: Մինչև վարը սկսելը մոլախոտերից շատերը հասցնում են սերմեր տալը: Մյս սերմերը թափվելով, բուսնում են և հետագայում խեղճում հացաբույսերին:

Ուշացրած ցելերից ստացվում է վատ բերք: Հյուսիսում, շտրացած հողերում սերմերը դարգանում են վատ, վատ ձմեռում են, վատ աճում, յենթարկվում են բազմաթիվ ֆլասատուների հարձակմանը և բերքը կորցնում:

II

ՄԱԳՈՒՐ ՅԵԼ

Ի՞նչ բան է մաքուր ցելը: Յեթե հերկը կատարվի վոչ թե ամբան սկզբին, այլ վաղ գարնան, վորից հետո ամառվա ընթացքում թույլ չարվի, վոր մոլախոտեր բսնեն ցելում, հաճախակի յերեսանց վարելով և պահելով հողի վերին շերտը փխրուն դրուժյան մեջ և մոլախոտերից ազատ, — դա կլինի մաքուր ցել:

Նշանակում է, մաքուր ցելը տարբերվում է սովորական ցելից նրանով, վոր վարվում է վաղ գարնանից: Դրանից հետո ամառվան ընթացքում մի քանի անգամ յերեսանց հերկվում է: Մոլախոտերին թույլ չի տրվում աճելու: Յելը մնում է միշտ մոլախոտերից ազատ: Վերին շերտը պահպանվում է միշտ փափուկ դրուժյան մեջ:

Այսպիսի ցելը կոչվում է մաքուր ցել: Նրա յերեսը միշտ մաքրած է մոլախոտերից: Մոլախոտի վոչ մի թիփիկ, վոչ մի ցողուն չէք տեսնի: Հողը վերևից փափկած է և մաքուր:

Առաջին հերկը (ցելիլը): Մաքուր ցելի առաջին հերկը կատարվում է վաղ գարնանից, հենց վոր հողը ցամաքում է, և կարելի չէ դաշտ յեղնել: Վաղ գարունը ամենալավ ժամանակն է մաքուր ցելի առաջին հերկը կատարելու համար: Այդ ժամանակ ցանելու համար դեռ ևս չուտ է, իսկ վարել կարելի չէ:

Յեթե դարնանացանը ուշացնել չի կարելի (իսկ գարնանացանը ըստ հնարավորության վաղ պետք է կատարել), այն ժամանակ մաքուր ցելերի մշակմանը պետք է անցնել գարնանացանը վերջացնելուն պես: Մաքուր ցելի առաջին հերկը ուշացնել յերբեք չի կարելի: Ամեն մի դանդաղում կիջեցնի ապագա բերքը: Ամեն մի սրբ, ամեն մի ժամը պետք է հաշվի առնել. չի կարելի ուշացնել մաքուր ցելի առաջին հերկը վոչ մի օրով նույնիսկ ժամով: Վորքան ուշ է կատարվում հերկը, այնքան իջնում է բերքի քանակը:

Յեվ դա հասկանալի չէ:

Վաղ կատարած հերկը, յերբ հողը դեռ ևս խոնավ է, պահպանում է հողի խոնավութունը: Ուշացրած հերկը, ընդհանրապես կառակը, կորցնում է խոնավութունը: Հողը չորանում է, պատում մոլախոտերով, վորոնք նույնպես քամում են հողի խոնավութունը:

Առաջին հերկի խորությունը: Մաքուր ցելի առաջին հերկը կատարում են խորը: Առաջին հերկի լրիվ խորությունը համարվում է 15 սանտիմետր: Ավելի խորը վարելու կարիք չկա: Ավելի խոր վարը, օրինակ 20 սանտիմետր խորությամբը, իրեն չի արգարացնում: Ավելի խորը վարելուց բերքը վոչ միայն չի բարձրանում, այլև ընկնում է:

Ցամաքելը (փոցխելը-տափաքելը): Գուլթանով վարած ցելը պետք է ցաքանել: Լավ է ցաքանել հենց գուլթանի յետևից: Տրակ-

տորաքարչ դուժանին կցվում են ցաքաններ. տրակտորը միաժամանակ և՛ վարում է, և՛ ցաքանում: Յեթե ցաքանելու ժամանակ ձիեր կամ յեզներ չեն բավականանում, ավելի լավ է ցելը մշակել բաժիններով: Վարելով դաշտի մի մասը, իսկույն ցաքանել այն, քանի դեռ հողը չի չորացել յերեսից:

Ցաքանելու համար հարկավոր է շտապել: Գուժանը վարում է անհարթ: Քամին խփելով ցելի անհարթութուններին—լանջերին, քաշում է խոնավութունը: Ցաքանը հավասարեցնում է այդ լանջերը և չի թողնում, վոր հողը չորանա:

Ցաքանել հարկավոր է յերկու, ամենաշատը յերեք հետքով, այնքան վոր հարթվի ցելի յերեսը: Շատ անգամ ցաքանելը փաստակար է: Հողի վերին շերտը փոշիանում է և տարվում է քամու կողմից: Յեթե անձրև է գալիս, փոշիացած հողի վերին շերտը կեղև է կազմում և փաստում է հողագործին:

Բացի այդ, փոշիացած հողի վերին շերտը դժվարացնում է ողի մուտքը հողի ներքին շերտերը: Ողը պետք է միշտ ազատ մուտք ունենա հողի ներսը: Ողից հողը հողահարվում է և դոյանում են բույսի համար սնդանյութեր: Հողի լավ դրութունը համարվում է վոչ թե փոշիացածը, այլ մանր կնձիկավոր՝ կորկանման դրութունը:

Ահա ինչու ցաքանելով հողը չպետք է հասցնել փոշիացած դրության:

Հետագա մշակումը: Վարելուց և ցաքանելուց հետո հետագա աշխատանքն—սահպանել ցելը մուլախոտերից ազատ և փափուկ դրության մեջ: Յեթե ցելը, նայած յեղանակին, յերկու-յերեք շաբաթից ծածկվում է մուլախոտերով, նրանց վոչնչացնում են: Վոչնչացնել մուլախոտերը կարելի յե վարելով՝ կուլտիվատորով, Ռանդելի ցաքանով, զսպանակավոր ցաքանով, յերեսավարով (լուչչիլնիկով), նույնիսկ յերկու խփանի դուժանով, հիշյալ գործիքների թևերը վերցնում են:

Շատ կարևոր է մուլախոտերը վոչնչացնելիս չըրջել հողաշերտը: Դա կարող է միայն փաս բերել: Այդպիսի վարը միայն չորացնում է հողը: Վերին չոր շերտը շրջվում է ցած, ցածի խոնավ շերտը դառնում է վեր, վորից և առաջանում է հողի չորացումը:

Այդ պատճառով էլ ամբողջ ամառվա ընթացքում, մինչև աշնանացանը, սև ցելը չեն վարում այնպես, վոր հողաշերտերը շրջվի: Հողի վերին շերտը մշակում են գործիքներով, առանց հողաշերտի շրջման: Այս տեսակ մշակելուց հողը չի չորանում և մուլախոտերն էլ վոչնչանում են:

Յեթե յերեսանց մշակելու ժամանակ դոյանում են անհարթութուններ, առաջանում են ախոսներ, հարկավոր է հարթել ցելը ցաքանելով:

Յելի յերեսանց մշակելը կատարվում է 4-6 սանտիմետր խորությամբ: Ավելի խորը մշակելը կնպաստե հողի չորանալուն: Իսկ խոնավության կորցնելը մշակելու ժամանակ յերեք թույլ տալ չի կարելի:

Անձրևներից հետո ցելերի յերեսին առաջանում է կեղև (քերիջ): Այդ կեղևը մնասում է ցելին: Նա չորացնում է հողը: Արևից կեղևը ճաքճոտում է, քամին այդ ճաքերով ներս է մտնում հողը և դուրջիացնում խոնավութունը:

Կեղևը հարկավոր է վոչնչացնել: Վոչնչացվում է կեղևը հեշտությամբ մի կամ յերկու հետք ցաքանի անցնելուց հետո:

Վոչնչացնելով առաջին անգամ մուլախոտերը, հետևում են նրա յերկրորդ յերևալուն: Յեթե մուլախոտերը նորից բանում են, կատարում են յերեսանց նույն վարը 4-6 սանտ. խորությամբ, առանց հողաշերտը շրջելու:

Այս բանը շարունակում են մինչև աշնանացանը: Մուլախոտերի վոչնչացնելը: Շատ անգամ յերեսանց մշակելով ցելը, հեշտությամբ վոչնչացնում ենք մուլախոտերը: Ամառվա ընթացքում, մինչև աշնանացանի սկսելը, ցելը խեղապես լինում է մաքուր: Բայց կան մուլախոտեր, վորոնք համառորեն սպաքարում են իրենց դոյութան համար և չեն կամենում վերանալ դաշտից:

Մուլախոտերը դաշտից վերացվում են նաև զբաղեցրած ցելերվ միջոցով, վորոնց մասին խոսք կլինի հետո: Բայց զբաղեցրած ցելերը ամեն տեղ կիրառելի չեն: Այնտեղ, ուր հնարավոր է, հարկավոր է գերադասել զբաղեցրած ցելը առանձնապես դաշտերը մուլախոտերով խիստ աղքատած լինելու դեպքում: Մուլախոտերը կոչնչանան, կկորչեն դաշտից:

Պարարտացում: Հարթաժայռերի սեահողերը սովորաբար «յուր յեն դնում» առանց պարարտացման: Հարթաժայռերում գոմաղբը ծառայում է վորպես վառելանյութ (աթարը-կղյակ), քիչ դեպքերում — բանջարանոցների համար: Յեթե կա ուրիշ վառելանյութ, գոմաղբը դուրս են տանում գյուղից, թափում են ձորափերը կամ վառում են:

Գյուղացիները այս բացասական վերաբերմունքը գոմաղբի նկատմամբ ունի վորոշ հիմք: Մի քանի փորձնական դաշտերի գոմաղբով կատարած պարարտացումը չի ավելի գրահան հետևանքներ: Մի քանի դեպքերում գոմաղբը վոչ միայն չի բարձրացրել, այլ և իջեցրել է բերքը: Յե՛վ այս դեպքում, ակնհայտ է, շուրջ ունեցել է վճռական նշանակություն: Պահանջվում է գոմաղբը փոխելուց հետո շուտ տալ հողաչերտը: Վերին, չոր մասը գոմաղբի հետ միասին ընկնում են տակը, իսկ խոնավ մասը — վեր: Հողաչերտի այս շրջումից հողը չորացել է, և այդ պատճառով էլ ընկել է բերքը:

Ուրեմն՝ ինքը գոմաղբը վոչ մի վատ դեր չի կատարել բերքի պահպանման գործում, և կոլխոզնիկը գոմաղբը դեն ածելուց առաջ թող մի լավ մտածի, թե լավ չի լինիլ արդյոք գոմաղբը դուրս տանել կամ դաշտը կամ պարտեզը:

Պարարտացումը ներգործում է վոչ միայն առաջին ցանքաի բերքին, այլ և յերկրորդ, և հաջորդ պարիները բերքին:

Փորձերը ցույց են տալիս, վոր գոմաղբը շաղ տալով հնգդաշտային ցանքաշրջանառություն ցելը, ազդում է հետագա բոլոր չորս կուլտուրաների վրա: Հնգդաշտի բոլոր բույսերը՝ — հաճարը, կարտոֆիլը, կորեկը և վարսակը (պոտթող) ավելացրել են իրենց բերքը: Կարտոֆիլը, կորեկը և վարսակը բարձրացրել են իրենց բերքատվությունը այնքան շատ, վորքան շատ գոմաղբ է յեղել մուծած ցելը:

Ձեռնուռ յեն նաև ֆոսֆոր պարունակող պարարտանյութերը:

Գոմաղբը հարկավոր է վարել մաքուր ցելի առաջին հերկի ժամանակ, վաղ դարնան: Դրա համար հարկավոր է գոմաղբը դուրս տանել դեռ ձմրանից և կուլտուրով դեղել գաշտում: Վաղ դարնանը, յերբ հալչում է ձյունը, գոմաղբը ցրում են և իսկույն փարում: Գոմաղբը կարելի չէ կրել նաև դարնանը: Բայց ձմրանը դյուրին է, վորովհետև օդատ ժամանակ շատ կա: Գոմաղբը պետք

է շաղ աալ հաժաար հասառթյաոր: Մյուղես ավելի լավ արդյուքը կատացվի: Հերկում են գոմաղբած դաշտը 15 սանտիմետր խորությամբ: Պետք է այնպես հերկել, վորպեսզի ցելը յերեսին բուրրովին արը չմնա: Յեթե աղբը ծղոտալից է, գոմաղբը լավ վարել չի կարող: Մ.յս դեպքերում հարկավոր է նշանակել հատուկ բանջարներ, վորոնք փոցխերի միջոցով փոում են աղբը ակուսի հատակին: Անցնող դաթանը, շրջելով հողաչերտը, լավ ծածկում է գոմաղբը ակուսի մեջ:

Գոմաղբը պետք է վարել խոնավ վիճակում, թույլ չտալով վոր նա չորանա: Ձմրանը դաշտ տարած աղբը պետք է հերկել վաղ դարնան, իսկ դարնան կրածը պիտի կազմակերպել այնպես, վոր իսկույն ցրվի դաշտում և հերկվի: Հերկելուց հետո հարկավոր է անհասպող ցտքանել:

Պարարտացրած ցելի հետագա աշխատանքները նույնն են, ինչ վոր և չպարարտացրած ցելինը:

Նախացանքային մշակումը: Մաքուր ցելը, պարարտացումով թե առանց պարարտացման, հերկվում է խորը մեկ անգամ, վաղ դարնանը: Ամառվա ընթացքում այլևս չի հերկվում, այլ միայն յերեսանց հողը փափկացվում է:

Թեկուզ մաքուր ցելի յերեսը միշտ էլ փափկացվում է, բայց և այնպես ցանքսի ժամանակ այնքան է պնդանում, վոր գերմանական օտիլի սաչնիկով շարքացանը աշխատում է անբավարար:

Ցանքսերից առաջ մշակելու էյությունը այն է, վոր ցանքսից առաջ կատարվում է վերնաչերտի փափկացում, առանց չերտի շրջման, 4 — 6 սանտիմետր խորությամբ: Մյու աշխատանքը կարելի չէ կատարել բուկերով, վորից հետո հարկավոր է ցաքանել մեկ կամ յերկու հեռուով:

Նման կերպով մշակած դաշտը նպատում է տարեկանների լավ և շարքային ցանին: Ծարքացանները թեթև են աշխատում, չեն լցվում հողով և աշխատանքը կատարում են լրիվ: Բուսած հատիկները տալիս են լավ ծիլեր:

Ի՞նչ է սալիս վաղ կատարած մաքուր ցելը ուշացրած ցելի համեմատությամբ: Դժվար չէ յեղրակացնել, վոր մաքուր ցելը, մշակած վերև նկարագրած ձևով, բարձր է կանգնած գյուղացու սովորաբար ուշացրած ցելից: Մաքուր ցելը կլինի մուլտոտերից ադատ, նրա մեջ կլինեն շատ խոնավություն և շատ անգանյու-

թեր և հողի ստրուկտուրան — հողի կառուցվածքը կլինի կնձիկա-
յին, նպաստավոր հացաբույսերի աճման համար: Այդ պատճա-
ռով ել տարեկանների բերքը մաքուր ցեղերում կլինի ավելի բարձր,
քան ուշացրած ցեղերի բերքը:

Հարկավոր է նշել մաքուր ցեղի մի առանձնահատկու-
թյունը ևս:

Մաքուր ցեղը չի վախենում յերաշտից:

Ինչ տեսակ յերաշտ ել ամառը լինի, մաքուր ցեղը միշտ ել
մնում է խոնավ: Միայն վերին շերտը կլինի չորացած, իսկ այդ
բարակ շերտի տակ գտնվում է խոնավ հողը: Յեթե վերցնենք այդ-
պիսի հողը բոլի մեջ, սեղմենք, նրա վրա կմնան մեր մտտերի
հետքերը:

Մաքուր ցեղերի այսպիսի դրուժյան դեպքում դժբախտություն
չե, յեթե տարեկանների ցանքսից առաջ անձրև չգա: Կարելի յե
առանց անձրևի սպասելու ցանել իր ժամանակին: Սերմերը դուրս
կգան լավ, ինչպես անձրևից հետո: Տարեկանների լավ բանելը աչ-
նանից ապահովում է դալ ամառվա բերքը:

Բոլորովին այլ կերպ է լինում ուշացրած ցեղերի դեպքում:

Ուշացրած ցեղը յերաշտ տարում բոլորովին չորանում է: Պա-
հետի խոնավություն նրանց մեջ չկա: Չոր հողի մեջ սերմ չի կա-
րելի ձգել: Միևնույն է, նրանք հողում դուր պառկած կմնան մինչև
անձրևի դալը: Այդ պատճառով ել գյուղացիները սպասում են
անձրևի և ցանում են անձրևներից հետո: Բայց անձրևը միշտ իր
ժամանակին չի դալիս: Հաճախ նա ուշանում է և ուշացնում
ցանքը:

Տարեկանների ուշացրած ցանքը հնարավորություն չի տալիս
նրանց կանոնավոր կերպով զարգանալու և վատ զարգացած բույ-
սերը վատ ել ձմեռում են, վորի պատճառով շատերը փչանում են,
իսկ բերքը ստացվում է վատ:

Վաղ կատարած մաքուր ցեղը լավ աղղեցություն է թողնում
և հետագա տարվա տարեկան հացաբույսերի զարգացման վրա:
Նա անբերրիություն չգիտե: Նույնիսկ ամենաչոր յերաշտ տարի-
ներին մաքուր ցեղը տվել է 5 ցենտներ (30 փութ) բերք, մինչդեռ
ուշացրած ցեղերի վրա փոչինչ չի բուսել:

Ուշացրած ցեղերի բերքը լինում է ցած, նույնպես և հատիկի
վորակը: Նրա բերքը անկայուն է: Յերաշտ տարին նա չի վերա-
դարձնում գյուղացիների նույնիսկ սերմացուն:

Ասում են, թե ուշացրած ցեղը հարկավոր է անասուններին
արածելու համար: Իսկ շատ կեր են ստանում, արդյոք, անասուն-
ները այդտեղից: Լինում են նրանք կուշտ:

Բոլորին հայտնի յե, վոր ուշացրած ցեղը քիչ խոտ է տալիս:
Անասունները ման են դալիս սոված:

Ուշացրած ցեղերի վերաբերյալ կատարված մի շարք հետազո-
տություններ ցույց են տալիս, վոր այդտեղի խոտերը կուշտ են,
քիչ անդատու և այդ ցեղը հնարավորություն չունի անասուններ
կերակրելու:

Անասուններին պետք է ապահովել հատուկ արածացնելու
գաշտով, ցանելով այնտեղ հատուկ խոտեր, վորոնք շուտ և լավ
են աճում: Նման հատկապես հիմնած հանդերում անասունները
կարող են կուշտ սնվել լավ հյութալից խոտերով:

Հարկավոր է միայն դիտակցել ուշացրած ցեղերի միասակա-
բությունը: Կարևոր է հասկանալ վաղ կատարված մաքուր ցեղերի
առավելությունը:

III

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՑԵԼ

Ի՞նչ է գրաղեցրած ցեղը: Յեթե մենք ցեղը դրադեցնենք մի վորեկ
բույսով այն հաչվով, վոր աշնանացանի ժամանակ նա ազատած
լինի գաշտը, և դեռ ելի ժամանակ մնա ցեղը յենթարկելու հետագա
մշակման աշնանացանի համար, այդպիսի ցեղը կկոչվի գրաղեցրած:

Հետևապես, գրաղեցրած ցեղը տարբերվում է մյուս տեսակի
ցեղերից նրանով, վոր նա գրաղեցվում է վորեկ կուլտուրայով:

Ցեղը ցանում են տնտեսության համար անհրաժեշտ վորեկ
բույս: Հետո այդ բույսը հարում են: Դաշտը յենթարկում են
մշակման և ցանում տարեկան հացահատիկներ:

Ի՞նչ բույսերով են գրաղեցնում ցեղը: Ցեղը գրաղեցնում են
այնպիսի բույսերով, վորը անհրաժեշտ լինի տնտեսության հա-
մար. շուտ հասնի և տա լավ հունձք: Ասենք, կոլխոդին հարկավոր
է տավարի կեր: Այդ դեպքում ցեղը գրաղեցվում է այնպիսի խո-



տերով, վորոնք ծառայում են տալարը (անասուններին) կերու-
կրելու համար: Ֆանուս են վիկի և վարսակի (սլոթոգի) խոտ-
նուրդ, սուղանի խոտ, մոզար, յեղիպտացորեն, սոյա:

Միլոսի համար ցանում են յեղիպտացորեն, արևածաղիկ, սոյա:

Յեթե կոլիսոյը կարիք ունի հյուսիսային կերի, այն ժամանակ
ցանում են կերի ճակնդեղ, դազար: Հարկավոր է միայն իմանալ,
կարող են այս արձատապտուղները մինչ աշնանացանը տալ բերք
և ի՞նչքան:

Յեթե անտեսությունը կարիք ունի վաղահաս կարտոֆիլի,
կամ կարող է ձեռնտու պայմաններով սպասել, այն ժամանակ ցելը
գրադեցնում են կարտոֆիլով:

Քաղչային բույսերը՝ ձմերուկը, սեխը, դգումը (կարկաժ)
նույնպես կարող են մշակվել:

Կարելի յե ցելը գրադեցնել վաղ հասնող տեսակի լոբիյով:

Բույսերը ընտրելու ժամանակ պետք է դեկավարվել հետևյա-
լով. —

1. Տնտեսության մեջ յեղող պահանջը,
2. հասունանալու ժամանակամիջոցը. այսինքն հունձը կա-
տարելու հնարավորությունը մինչ աշնանացանը,
3. բերքի քանակը,
4. գրադեցրած բույսի ազդեցությունը հետագա հացարույթի
բերքի վրա:

Տնտեսության մեջ յեղող պահանջը հաշվի առնելը դժվար չէ:
Սմեն մի անտեսություն վորտեղ կան անասուններ, անշուշտ կա-
րիք ունի կանաչ և հյուսիսային կերի:

Բույսի հասունանալու ժամանակամիջոցը հաշվի առնելը
դարձյալ դժվար չէ: Կապված է միջավայրի, տեղի հետ:

Դժվար չէ նաև վորոշել ցելը գրադեցնող բույսի բերքի քա-
նակը:

Դժվար չէ նաև փորձով իմանալ գրադեցրած բույսի ազդեցու-
թյունը հետագա հացարույթի բերքի վրա:

Կարելի յե նախորդ տեսլ, վոր գրադեցրած ցելի տարեկան-
ների բերքը ավելի ցած կլինի, քան մտքուր ցելում ցանած տարե-
կան հացահատիկների բերքը: Բույսը ցելում հողից քաշում է
ջուրը և օքսիգենը, դրա համար էլ օննդանյութերի քանակը գրա-
դեցրած ցելում ավելի քիչ է, քան մտքուր ցելում: Ջրի և օննդա-

նյութերի քանակով էլ պիտի վորոշվի բերքի բարձրությունը:
Բերքը կլինի պակաս:

Ջրադեցրած ցելի բույսերը հացարույթի բերքը զանազան չա-
փով են իջեցնում, կախված տեղի կլիմայից և հողից: Այն տեղե-
րում, վորտեղ հողը բերքատու յե և կլիման խոնավ, գրադեցրած
ցելի հացարույթի բերքը շատ քիչ է ցած մաքուր ցելերի հացա-
բույսերի բերքից: Ընդհակառակը, ուժեղ յերաշտով և անբերրի
հողերի դոտում գրադեցրած ցելի բույսերը հափաղանց ուժեղ կեր-
պով զցում են բերքը:

Կարելի յե ասել, կերի խոտերը, վորոնք ցանվում են չարա-
խոտի կամ սիլոսի համար, իջեցնում են տարեկանների բերքը
ավելի պակաս չափով, քան այն բույսերը, վորոնք գրադեցնում են
ցելը հատիկների համար:

Համեմատաբար քիչ են իջեցնում տարեկանների բերքը ճակն-
դեղը, դազարը, կարտոֆիլը:

Տարեկան ցորենը լավ բերք է ապրիս ձմերուկից, սեխից, և
զգումից հետո:

Բոլոր հիշած կուլտուրաներից պետք է դերագասել լոբին
և սոյան:

Ջրադեցրած ցելի համար կատարվող բույսի ընտրության մեջ
չսխալվելու համար հարկավոր է փորձ կատարել: Սեփական տըն-
տեսության պայմաններում կատարած փորձը անսխալ կերպով
կարող է ցույց տալ, թե ինչ բույս պետք է ընտրել:

Փորձեր կատարելու համար հարկավոր են ցուցմունքներ:
Ցուցմունքներ կարող են տալ տեղական ազրոնոմը (գյուղատըն-
տեսը) և ավելի լավ՝ տեղական փորձադաշտը:

Սմեն տեղ ցելերը գրադեցնել չի կարելի: Ջրադեցնել ցելերը
ամեն տեղ չի կարելի:

Ինչպես որևէ, գրադեցրած ցելերը իջեցնում են տարեկան-
ների բերքը: Յելերը գրադեցրած բույսերը քաշում են հողից
աննդանյութերը և, ամենից գլխավորը, — ջուրը:

Սմեն ինչ կախված է տեղից և կլիմայական պայմաններից:
Յեթե ամառվա ընթացքում թափվում է այնքան անձրև, վոր
խոնավության քանակը կարող է ապահովել տարեկանների նոր-
մալ գարդացումը, այդ դեպքում ցելերը գրադեցնել կարելի յե:

Այդ դեպքում գերադասելի յե դրադեցրած ցելը, քան թե մա-
քուրը, վորովհետև նա ալելի յե ձեռնառու կոլխոզին:

Յեթե կլիման չորային է, ցանքսերից առաջ թափված անձ-
բևեռը անհուտատու յեն, ժամանակին չեն դալիս, ուշանում են
կամ բուրրովին չեն գալիս, այն ժամանակ այդ տեղերում ցելերը
դրադեցնելը վնասակար է:

Ամեն կոլխոզ տեղում պիտի վորոչի, կարո՞ղ է նա դրադեցնել
իր ցելերը, թե վոչ:

Զբաղեցրած ցելի առաջին հերկը: Վարում են մեկ կամ յեր-
կու անգամ աշնանից: Յերկու անգամ վարում են այն ժամանակ,
յերբ հացարույսը հնձվում է վաղ, ամառվա միջին կամ վերջին:
Ասե՛նք դաշտը ցանած է դարնանի գարի կամ վարսակ, վորոնցից
հետո, գալ տարի դաշտը պիտի ցելվի: Գարին և վարսակը հըն-
ձվում են վաղ: Այս դեպքում ոգտակար է հերկել 2 անգամ, առա-
ջինը՝ յերես, 4—6 սանտիմետր խորությամբ, հենց բերքը հավա-
քելուց հետո, և յերկրորդը՝ 12—15 սանտիմետր՝ աշնանից:

Հերկել կարելի յե բուկերով, կուլտիվատորով, ոսնդալի
ցաքանով, գսպանակավոր ցաքանով:

Վորպեսզի հարած կամ հնձած հացարույսերը չխանգարեն
դաշտը մշակելուն, բեռները կամ տեղերը (փանջանքները) դնում
են ահոսի ուղղությամբ, ուղիղ գծով: Գեղերի մեջ առաջանում են
յերկար բաժիններ, վորը կարելի յե առանց դժվարությունների
հերկել կամ յերեսանց մշակել: Հետագայում, յերբ խուրճը կրվի,
մնացած խամ հողերը լրացուցիչ կերպով պետք է հերկել:

Անհրաժեշտ է յերեսանց վարը կատարել իսկույն հացարույ-
սերի հարելուց կամ հնձելուց հետո, վորովհետև հողը այդ ժա-
մանակ խոնավ է և հեշտությամբ հերկվում է: Մի քանի որ անցնե-
լուց հետո հողը չորանում է և վարելիս տալիս է ճումբեր: Հետևա-
պես, հնձելուց հետո իսկույն կատարած վարը պահպանում է հողի
խոնավությունը:

Յերկրորդ վարը պետք է կատարել առաջին վարից 1—1½
ամիս անցնելուց հետո:

Առաջին, յերեսանց վարը, վորը կատարվել է հողի դեռ ևս խո-
նավ ժամանակ, նպաստում է մոլախոտերի սերմի ծլելուն: Մոլա-
խոտերը աճում են, բայց հետո փչանում են խորը կատարած յեր-
կրորդ հերկից: Ուրեմն աշնանը կրկնակի կատարած վարը փչա-

ցնում է մոլախոտերը: Մյուս կողմից նա նպաստում է հողում
անուղի կուտակվելուն:

Փափկացրած հողը լավ է ներս թողնում ողը, իսկ ջրի գուրդ-
չիացում չի կատարվում: Խոնավությունը և ողը գործակցում են
հողի կյանքի գործնեյությանը: Հողում բնակվում են բազմաթիվ
միկրոբներ (մանրեններ): Այդ միկրոբների գործնեյության ազդե-
ցության տակ հողում կուտակվում են սննդանյութեր:

Կրկնակի հերկ չալիտի կատարել այն դեպքում, յերբ դաշտը
ցելվում է ուշ: Այդ վարում են մի անգամ, բայց խորը և աշնանից:
Աշնանացելը չեն ցաքանում:

Աշնանը կատարած վարը ցաքանում են դարունը, յերբ հողը
այնքան չորանում է, վոր կարելի յե դաշտ դուրս գալ: Ուշացնել
ցաքանելը հարկավոր չէ: Ուշացրած ցաքանելը հողը փոշիացնում
է, և պատճառ է դառնում հողը ավելորդ չորացնելուն: Յերկու
դեպքում ել հողագործը վնասվում է: Գարնան ցաքանելով վերջա-
նում է դրադեցրած ցելի առաջին մշակումը:

Զբաղեցրած ցելերի մշակությունը կարելի յե սկսել նաև դար-
նանից: Գարնանից հերկը կատարվում է վաղ, հենց վոր հնարա-
վորություն է ստեղծվում դաշտ դուրս գալու: Հերկում են 12—15
սանտիմետր խորությամբ: Հերկելուց հետո ցաքանում են յեր-
կու-յերեք հետքով:

Այն հարցին, թե յերբ է լավ սկսել դրադեցրած ցելերի մշա-
կումը, աշնանը՝ թե դարնանը, հարկավոր է պատասխանել, վոր
ցելի աշնանից մշակելը գերադասելի յե:

Գարնանը ընդհանրապես ժամանակը չի բավականանում ամեն
գործ կատարելու համար: Պահանջվում է դարնանը իրա ժամանա-
կին ցանել:

Աշնանը կոլխոզը ավելի շատ ժամանակ է ունենում: Զբաղե-
ցրած ցելի աշնանից վարելը նպաստում է տնտեսության մեջ աշ-
խատանքների հավասարաչափ բաշխելուն:

Պարարտացումը: Յեթե դաշտը պահանջ ունի պարարտանյու-
թերի, դրադեցրած ցելերը պարարտացնում են գոմաղբով կամ
հանքային պարարտանյութերով:

Աշնանից գոմաղբը կարելի յե մուծել առաջին վարը, կամ՝
յերկրորդը, նայած տնտեսության հարմարություններին:

Գոմաղբը հավասար կերպով դաշտի վրա բաշխելու համար՝ հարկավոր է դաշտը բաժանել վանդակների, այն հաշվով, վոր ամեն մի վանդակին հասնի մի գոմաղբ: Ավելի խիտ աղբելու նպատակով վանդակները փոքրացնում են աղբը: Թափում են ամեն մի վանդակի կենտրոնում և ապա շաղ են տալիս:

Մեքենացրած տնտեսություններում աղբի բաշխելը կատարում են մեքենաները: Այս դեպքում կարիք չկա դաշտը վանդակների բաժանելու:

Յեթն տնտեսական նկատումներով զբաղեցրած ցելը հերկվում է դարնանից, այն ժամանակ ավելի լավ է աղբը դաշտ կրել ձմեռը, իսկ վաղ դարնան հերկել 12—15 սանտիմետր խորությամբ, և ցաքանել յերկու հետք: Կարելի յե աղբը դուրս տանել և դարնանը, բայց վաղ, հենց վոր կարելի կլինի դաշտ դուրս դալ:

Աղբի չափը կախված է նրանից, թե հողը ինչպես է ազդվում այդ աղբից, և վորքան այդ աղբի քանակը արդարացնում է բերքի ավելացմամբ:

Մի հեկտարին 180 փութը համարվում թույլ պարարտացրած, 360 փութը միջակ, և 540 փութը՝ ուժեղ:

Ավելի լավ է տնտեսությունը փորձ կատարի իր դաշտերին և վորոշի պահանջվող աղբի քանակը ամեն մի հեկտարին:

Հանքային պարարտանյութերը մուծում են անմիջականորեն կուլտուրաների տակ: Մեքենայացրած տնտեսությունները ունեն այնպիսի ցանիչներ, վորոնք միաժամանակ սերմում են պարարտանյութը ցանում:

Մեքենաների բացակայության դեպքում աշխատանքը կատարվում է դաշտում՝ ձեռքով, շաղ տալու միջոցով: Պարարտանյութերը հավասարաչափ խառնում են հողի հետ, հետո ցրում:

Հանքային պարարտանյութերն ել մուծելիս պիտի աչքի առաջ օժենալ այն հանգամանքը, վոր բերքի ավելացումը ծածկի, արդարացի աշխատանքը:

Յերբ յեվ ինչպես ցանել ցելը: Ցելը պիտի ցանել հնարավորագրության չափ վաղ, վորքան այդ թույլ է տալիս բույսը: Պետք է աչքի առաջ ունենալ այն, վոր վորքան շուտ ազատվի զբաղեցրած ցելը, այնքան լավ: այնքան շատ ժամանակ կլինի համապատասխան կերպով հողը մշակելու:

Ցանում են զբաղեցրած ցելերը շարքերով և շաղ տալով: Նախապատվութուն պիտի տալ շարքավոր ցանքուն: Շաղ տալով սերմելուց պետք է խուսափել: Յեթն անհրաժեշտ է ցանել շաղ տալով, այդ դեպքում հարկավոր է դործադրել այն բույսերի վերաբերմամբ, վորոնք ցանվում են վաղ դարնանից: Ուշ ցանելու ժամանակ շաղ տալով ցանելը չի կարելի:

Լավ ծրում են հատիկները, յերբ հողում կա բավականին ջուր:

Շաղ տալով ցանելու ժամանակ հողը ավելի շատ ջուր է կորցնում, քան շարքերով ցանելու ժամանակ: Ահա ինչու հարկավոր է ձգտել շարքային ցանքուն, չասելով նույնիսկ այն մասին, վոր շարքացանը հավասար չափերով է բաշխում սերմը դաշտում և հավասար խորությամբ է սերմը թաղում:

Շարքային ցանը լինում է համատարած կամ շարքամիջային:

Համատարած շարքերով սերմում են կերախոտերի սերմերը՝ սուգանի խոտ, մոզար, յեգիպտացորեն, վիկի և վարսակի խառնուրդը: Վերջին դեպքում վիկը սերմում են մի ուղղությամբ, իսկ վարսակը նրան խաչադիր ուղղությամբ: Համատարած շարքային ցանի խոտերը լինում են մանր և կոշտ ցողուններով:

Լայնաշարք սերմում են սելոսի համար ցանվող բույսերը՝ յեգիպտացորեն, արևածաղիկ (դյուզարախան), սոյա: Շարքամիջային ձևով սերմում են ճակնդեղը, գազարը, կարտոֆիլը:

Բաղչային բույսերը մշակում են բունավոր ցանով:

Վաղ շարքային ցանի ժամանակ շարքացանը աշխատում է ցաքանած ցելերում: Ուշ ցանելու ժամանակ հարկավորվում է կատարել նախացանքային աշխատանք: Այդ ժամանակ ցելը պատած է լինում մոլախոտերով, և նրանց վոչնչացնելու համար դործ են անում զսպանակավոր կամ դիսկավոր ցաքաններ, կուլտիվատոր կամ բուկեր, հանած թեփերով: Այդպիսի նախապատրաստական աշխատանքից հետո՝ շարքացանը աշխատում է կանոնավոր:

Զբաղեցրած ցելերը սերմելիս սերմի չափը մնում է նույնը, ինչ վոր սովորական ցանքերի ժամանակ:

Սոտերը ցանվում են խիտ. սուգանի խոտը 12—16 կիլոգրամ մի հեկտարին, սորգոն 16—24 կիլոգրամ, մոզար 12—15 կիլոգրամ, վիկի և վարսակի խառնուրդը՝ մեկ-մեկ ցեխաներ ամեն մեկից, յեգիպտացորենը 1—2 ցեխաներ (ցեխաները հավասար է փիթի), սոյան 40—55 կիլոգրամ:

Սոյա ցանկելու ղեպըում հարկավոր է հողը վարակել նիտրո-
գինով: Նիտրոգինը պարունակում է բակտերիաներ, վորոնք
նպաստում են բերքի բարձրացմանը: Նիտրոգինը կարելի յե դուրս
գրել Ռուսաստանի բակտերիոլոգո-ադրոնոմիական կայանից,
Մոսկվա, Կոնյուշկովսկայա փող. 31.

Զբաղեցրած ցելերի բույսերի խնամքը: Զբաղեցրած ցելերի
բույսերին խնամելու յեղանակը նույնն է, ինչ վոր և սովորական
ցանքերինը:

Համատարած ցանքերի ղեպըում սովորաբար խնամք չի պա-
հանջվում: Բույսերը այնքան հաջող են զարգանում և խեղդում են
մուլխոտերը, վոր մարդու ոգնությունը դառնում է ավելորդ:

Իսկ յեթե պատահի, վոր մուլխոտերը խեղդել սկսեն կուլ-
տուրական բույսերը, հարկավոր է քաղհանել, նույնիսկ այն ղեպ-
ըում, յերբ արտում կերախոտեր են:

Լայնաչարք ցանքերի ժամանակ հարկավոր է շարքամիջա-
յին կուլտուրաներին խնամք ցույց տալ:

Կարտոֆիլի ղեպըում հարկավոր է շարքերի մեջերը փափկա-
ցնել, և կարտոֆիլի արտը պահպանել ազատ մուլխոտերից՝ քաղ-
հանելու միջոցով:

Նույնը և արմատապտուղների (ճակնդեղ, դազար) ղեպըում:
Սրանց շարքերի մեջերը հարկավոր է բահել, իսկ արտը՝ նոսրա-
ցնել, դուրս տալով տունկերը:

Սիլոսի համար շարքային ցանք ունեցող յեզիպտացորենը և
սոյան յենթարկվում են նույն խնամքին:

Սոյան նոսրացնել չի պահանջվում:

Բաղչային կուլտուրաների հողը նույնպես պիտի պահել փափ-
կացրած և մուլխոտերից ազատ:

Զբաղեցրած ցելի վնասատուները: Զբաղեցրած ցելը նպաստում
է գյուղատնտեսական փնասատուների վոչնչացմանը:

Համատարած և շարքամիջային ցանքերը հաճախակի յեն-
թարկվելով փափկացման, վոչնչացնում են մուլխոտերը:

Վորքան վոչնչանում են մուլխոտերը, նույնքան ել վոչնչա-
նում են փնասատուները:

Այն ղեպըում, յերբ փնասատուները չեն կորչում արտից և
նույնիսկ սկսում են փնասել կուլտուրական բույսերը, հարկավոր

է գյուղատնտեսի միջոցով դիմել բույսերի պաշտպանության տե-
ղական կայանին:

Յե՞րբ յեվ ինչպե՞ս հավաքել գրաղեցրած ցելի բերքը: Զբա-
ղեցրած ցելի բերքը պետք է հավաքել այնպես, վոր մինչև աշնա-
նացանը մնա այնքան ժամանակ, վոր հնար լինի հողը մշակելու:
Մեծնաքիչը՝ աշնանացանից յերկու շաբաթ առաջ պետք է դաշտը
ազատված լինի զբաղեցրած բույսերից:

Կանոնն այն է, վոր ինչքան շուտ ազատվի դաշտը զբաղեցրած
կուլտուրայից, այնքան լավ, այնքան ժամանակ շատ կլինի դաշտի
հետագա մշակման համար, այնքան ավելի խոնավություն կմնա
հողում, այդքան ավելի կկուտակվեն հողում սննդանյութերը:

Ամենից վաղ հարվում են խոտերը:

Յեթե աշխատող ձեռքերի պակասության պատճառով հնարա-
վոր չէ հունձը կատարել շուտափուլթ և միաժամանակ հողը մշա-
կել ամբողջ տարածությամբ, այն ժամանակ հունձը և հողը մշա-
կելը կատարում են մաս-մաս: Կեսը կամ յերկու յերրորդը հնձե-
լուց հետո իսկույն հերկում են, և ապա նորից անցնում մնացած
ժասը հնձելու և հերկելու: Այսորվա հնձածը վաղը յերեսանց
հերկվում է:

Զբաղեցրած ցելի բերքահավաքից հետո կատարվող մշակու-
րյունը: Զբաղեցրած ցելերի հունձը և հերկը համաձայնեցնելը ան-
հրաժեշտ է հողի խոնավությունը պահպանելու համար:

Հնձից հետո հողի յերեսին շերտը դեռ խոնավ է լինում: Յեթե
իսկույն չի փակեցնենք, չորացող յերեսի շերտը հողի ներսից դուրս
կքաշի խոնավությունը: Հողը կչորանա: Չորացած հողը մշակելը
դժվար է: Յեղը կլինի ճումբերից: Յեթե այդ ճումբերը փչրելու
համար դործադրենք ցաքան, կբարձրանա փոշի: Այստեղ դործը
կվատանա: Հողի փոշիացած դրությունը հողագործության հա-
մար փնասակար է: Փոշին քամին տանում է: Փոշիացած հողում
դանդաղ են առաջանում և կուտակվում բույսին անհրաժեշտ
սննդանյութերը:

Ուրիչ բան է, յերբ զբաղեցրած բույսի հնձելուց հետո կա-
տարվում է վարը:

Պոնավ հողը հեշտ հերկվում է: Հողը փչրվում է մանր կրն-
ձիկներով: Հողի սարուկտուրան-կառուցվածքը դառնում է հա-
տիկավոր: Հատիկվոր-կնձիկավոր հողը ավելի բարենպաստ է հողի



խոնավութիւնն կլանելուն և կուտակելուն, այլ և սննդանյութերի առաջանալուն:

Զբաղեցրած ցելերում ցանքսից առաջ կատարվող մշակութայինը: Յեթե ցանքս կատարելու ժամանակ ցելում բուսել են մոլախոտեր և հողը պնդացել է, հարկավոր է ցելը ցանքսից առաջ մշակել:

Նախացանքային աշխատանքը կատարվում է յերեսանց 4—6 սանտիմետր խորութիւնով: Այնքի խոր վարը հողը կչորացնի և բերքատուութիւնը կպակասեցնի:

Ի՞նչ ոգուտ կա զբաղեցրած ցելերից: Այն տեղերում, վորանց մեծ յերաշններ չեն լինում և կլիմայական պայմանները թուլացած են զբաղեցնել ցելը, պետք է զերազասել բույսերով ցելը զբաղեցնելը:

Մաքուր ցելը, սև ցելը, ուշացրած ցելը տնտեսութեանը վնասն չեն տալիս: Ամբողջ տարին նրանք տնտեսութեան համար կորած են:

Մեզ մոտ՝ Խորհրդային Միութեան մեջ, մինչև վերջին ժամանակներս ամբողջ վարելահողերի 27%—ը, կամ 35 միլիոն հեկտար յեղել են ազատ-զատարկ:

Բնականորեն հարց է ծագում, ինչո՞ւ այդ ահադին տարածութիւնը մնում է դատարկ: Չի՞ կարելի, արդյոք, ցելերը զբաղեցնել այնպիսի բույսերով, վորոնք ոգուտ բերելին տնտեսութեանը և միաժամանակ չպակասեցնելին տարեկան հացաբույսերի բերքը:

Պարզվում է, վոր այդ խնդիրը լրիվ կերպով լուծելի է:

Խ. Միութեան ցելերի ահագին տարածութիւնը կարելի է զբաղեցնել բույսերով: Զբաղեցրած բույսերով կորող ենք ավելացնել հողագործութիւնից ստացվող յեկամուտը և լավացնել տնտեսապահութեան զարգացման դարձը, վորն այժմ հարվածային խնդիր է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսութեան տնտեսավ մեք՝ կոլխոզն է: Գյուղատնտեսութեան մեջ կուտուրական աշխատավորի համար վոչ մի կառկած չպիտի լինի այն առթիվ, վոր վաղ կատարվող մաքուր ցելը, իսկ վորոչ տեղերում և զբաղեցրած ցելը, ամենաընդունելի ցելերն են:

Ուշացրած ցելը պիտի դուրս դցել մեր մշակութիւնից, և վորքան շուտ, այնքան լավ:

Ինչպե՞ս կատարել այդ:

Զբաղեցրած և մաքուր վաղացելերի իրականացման համար հարկավոր է վերակառուցել տնտեսութեան կառավարելու յեղանակը — վերակառուցել արտադրութեան ձևը, հողերի մշակութեան յեղանակը: Զբաղեցրած և մաքուր ցելերում չի կարելի անտուններին արածացնել. ուրեմն հարկավոր է հանդի և արտատեղերի հարցը պարզել:

Նոր ցելերը պահանջում են նոր գյուղատնտեսական գործիքներ: Վորքան կատարելագործված են այդ գործիքները, այնքան ավելի ձեռնտու յեն նրանք, ավելի բարձր բերք կստացվի այդ գործիքներով մշակած հողերից:

Մյուս կողմից զանազան ցելերի վերաբերյալ տնտեսութեանում հարկավոր է փորձեր կատարել, իսկ սա յել իր հերթին պահանջում է զիտական, ազրոնոմիական տեղեկութիւններ: Վորքան այդ զիտութիւնը բարձր է, այնքան էլ տնտեսութիւնը կարելի է բերքառատ դարձնել:

Առանձին՝ անհատական տնտեսութեան տեր գյուղացին այս բոլորից չի կարող ոգուրել: Ընդհակառակը՝ տնտեսութեան լավացման գործը թեթևանում է, յեթե առանձին գյուղացիներ իրենց տնտեսութիւնները միացնում են և միասին կառավարում — կազմակերպում են կոլեկտիվ տնտեսութիւն՝ կոլխոզ:

Այն, ինչ վոր անհնարին ե անհատական տնտեսութեան համար, դառնում ե մատչելի կոլխոզին:

Կոլխոզում ամեն ինչ լայնանում, մեծանում ե. — հողերի սահմանները, գործիքների և անասունների թիվը, ունեցվածքը, զիտութունը. իսկ տնտեսութունը և մարդիկ բավականին կատարելագործվում են:

Ուրեմն, յեթե մենք ցանկանում ենք կատարելագործել մեր տնտեսութունը, մենք պետք ե ձգտենք դեպի կոլխոզ:

Մենք պետք ե կանչենք ուրիշներին՝ — դեպի կոլխոզ, դեպի տնտեսութեան արմատական վերակառուցումը:

Տնտեսութեան ամենալավ ձևը կոլխոզն ե:

00

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I

ՅԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Ինչ բան ե ցելը.

Ինչու յե հարկավոր ցելը.

Ինչ տեսակ ցելեր են լինում.

II

ՄԱԲՈՒՐ ՅԵԼ

Ինչ բան ե մաբուր ցելը.

Առաջին ցելերը.

Առաջին հերկի խորութունը.

Ցափանումը (փոցխումը).

Հետագա մշակումը.

Մուխտաների վազնչացումը.

Պարարտացումը.

Ցափանելուց առաջ մշակելը.

Ի՞նչ ե տալիս մաբուր ցելը գյուղացիական ցելերի համեմատությամբ.

III

ՉԲԱՂԵՑՐԱԾ ՅԵԼ

Ինչ բան ե զբաղեցրած ցելը.

Ինչ բույսերով են զբաղեցնում ցելը.

Ամեն տեղ ցելերը զբաղեցնել չի կարելի.

Առաջին ցելը.

Պարարտացումը.

Յե՞րբ յեվ ինչպես ցանել ցելը

Ինչպես խնամել զբաղեցրած ցելի բույսերը.

Զբաղեցրած ցելի վնասատուները.

Յերբ յեվ ինչպես հավաքել զբաղեցրած ցելի բերքը.

Զբաղեցրած ցելի բերքահավաքից հետո կատարվող մշակումը.

Զբաղեցրած ցելի նախացանֆային մշակումը.

Զբաղեցրած ցելի ստացվող ոգուտը.

IV

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսության ամենալավ ձևը կոլխոզն ե:

ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՆՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ՋՐԻ.
ԴԻՄԵՆ՝ Москва, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

« Ազգային գրադարան



NL0287366

8 407.

130
6617

16777

Цена 8 коп.
С. X. 4.

м. 81

м. 1



А. ЗЕМЛЯК
Ранние чистые и
занятые пары

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, Центр, Никольская, 10